ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ՝
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ (ԾԱԾԿԱԳԻՐ 3.3-1) ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետը՝
ա) ենթակա և հաշվետու է աշխատակազմի քարտուղարին,
բ) Առաջատար մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է աշխատակազմի աշխատանքային ծրագրի մշակման աշխատաքներին, իրականացնում է ծառայողական բնույթի նյութերի սահմանված կարգով համակարգչային կազմման աշխատանքներ, ապահովում է իր կողմից սպասարկվվող տեխնիկայի բնականոն և անխափան աշխատանքը, ապահովում է գույքահարկի տեղեկատվական տվյալների շտեմարանի հետ կապված աշխատանքները, պատասխանատվություն է կրում համակարգչային տպագրությամբ գյուղապետարանից ելքագրվող ծառայողական գաղտնիք պարունակող փաստաթղթերի գաղտնիության ապահովման համար :
գ) Իրականացվում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:
Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է առնվազն միջնակարգ կրթություն:
ա) Պաշտոնի անձնագրի 10-րդ կետի « բ » ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,
բ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը,
գ) համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:
Մրցույթին մասնակցելու համար դիմողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.
ա) գրավոր դիմում (հանձնաժողովի անունով),
բ) համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարմանը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմ (ների),աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակի հետ միասին, **գ)** հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում հայաստանի հանրապետության կառավարության 2005թ. Մարտի 3-ի թիվ 310-ն որոշմամբ հաստաված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,
դ) հայտարարություն այն մասին , որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
ե) « Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի «ե» կետի պահանջը բավարարելու նպատակով արական սեռի անձինք ներկայացնում են զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք,

զ) մեկ լուսանկար (3x4 չափսի),
է) անձնագրի պատճենը:
Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթերով: Փաստաթղթերն ընդունվում են Խորոնքի գյուղապետարանի շենքում կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ և ՀԳՄ հարցերով վարչությունում,(ք. Արմավիր Խ.Աբովյանի 71) ամեն օր 9:00-ից մինչև 17:00-ն՝ բացի շաբաթ և կիրակի օրերից:

Ներկայացրած փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում:
Մրցույթին մասնակցել ցանկացողներնը լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Խորոնքի գյուղապետարանի աշխատակազմ,
/ գ. Խորոնք/, ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ և ՀԳՄ հարցերով վարչություն (ք. Արմավիր Խ.Աբովյանի 71) հեռ.՝ (0237) 2-07-70, (0237) 2-76-49:Մրցույթը կկայանա 2015թ.-ի դեկտեմբերի 25-ին ժամը 14:00 –ին Խորոնքի գյուղապետարանում: Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2015թ.-ի դեկտեմբերի 11-ը: